

ԱԾԱԿԱՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՌԻՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Գոհար Հովսեփյան

Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան

Օտար լեզուների դասավանդման մեթոդների կատարելագործման համար կարևորագույն նշանակություն ունի ուսուցման խնդիրներին և նպատակներին համարժեք լեզվական նյութի կամ լեզվական որևէ կառույցի ընտրությունը, դրա կարևորության հիմնավորումը և համապատասխան լեզվական/խոսքային վարժությունների մշակումը: Անշուշտ, մեթոդական տեսանկյունից ընտրված կամ լեզվախոսքային ողջ «տարածքից» առանձնացված նյութը պետք է որոշակի կարևորություն ունենա խոսքային գործունեության այս կամ այն տեսակի համար և լեզվական բարդության առումով որոշակի դժվարություն ներկայացնի:

Երկարամյա դասավանդման մեր փորձը վկայում է այն մասին, որ նման լեզվական նյութ կարող է ծառայել ածականական գնահատողական կառույցը, քանի որ այն հաճախակի է գործածվում բանավոր խոսքում, մասնավորապես ուսուցման բարձր փուլում գեղարվեստական տեքստերի վերլուծության, մեկնաբանության և վերարտադրության ժամանակ:

Նախ հակիրճ կանգ առնենք ածականական գնահատողական կառույցների լեզվական առանձնահատկությունների վրա: Ինչպես արդեն նշել ենք մեր նախորդ հոդվածներից մեկում գնահատողական կառույցների հետազոտման համար անհրաժեշտ է հաշվի առնել կառույցի կազմավորման բաղադրիչները՝

1. գնահատության սուբյեկտը - անձը, որը որևէ առարկայի (երևույթի) նկատմամբ ցուցաբերում է գնահատողական վերաբերմունք,
2. գնահատության օբյեկտը - առարկան (երևույթը), որի նկատմամբ ցուցաբերվում է գնահատողական վերաբերմունք,
3. գնահատության հիմունքը - այն (դիրքորոշում, տեսակետ, փաստարկ), ինչի հիման վրա կատարվում է գնահատությունը,
4. գնահատության բնույթը, որի հիմնական տարրերն են (+) կամ (-) հարանշանները (Ивин 1970; Hartman 1967; Findlay 1963):

Գնահատության օբյեկտը կառույց կարող է ներմուծվել *in* նախդրի միջոցով: Այս դեպքում նախդրային շարույթի կազմում գնահատության օբյեկտը կարող է արտահայտված լինել՝

1. գործողություն ցույց տվող գոյական անվամբ
He saw them bathed in that steady flow of yellow light... in their movements they were beautiful. (WND 336)
2. հատկանիշ ցույց տվող գոյական անվամբ
His gaze (was) insolent in its indifference. (LVG 22)
She wished to get her (Eleanor) back to her past. ... and to her so beautiful in its unreality. (WND 267)

3. անծի հոգեկան հատկանիշներ ցույց տվող գոյական անվամբ
Nigel has always been profoundly unsatisfactory in his character. (CHDD 147)
She was so odd in her manner – absolutely in a dither. (CME 76)
4. կանխադրույթով
He was late in arriving, which was good in that it delayed the inevitable question as to the fate of the picture, but bad in every other respect. (WMU 89)

Գնահատության օբյեկտը կարող է արտահայտված լինել նաև *something, anything, nothing* անորոշ դերանուններով: Այս դեպքում ողջ նախդրային կառույցը ձեռք է բերում մեկ այլ նշանակություն: Օրինակ.

There was something horrible in the noise they made. (WY 345)
There was something strange in her words. (JE 60)

Something անորոշ դերանվան միջոցով կառույց է ներմուծվում գնահատության առաջնային օբյեկտը, որի օգնությամբ էլ գնահատվում է առարկան կամ իրավիճակն ամբողջությամբ: Այդ դերանունը, հանդես գալով որևէ հատկանիշի կամ հատկանիշների խմբի փոխարեն, գուրկ է կոնկրետ վերաբերումից (*reference*) և առաջ է բերում որոշակի հակասություն գնահատության կոնկրետության և այդ գործընթացում սուբյեկտի անորոշության միջև:

Այսպես, հմմտ. «Այդ մարդու մեջ ինչ-որ տհաճ բան կար» ասույթում դժվար է որոշել, թե որն է այդ տհաճ բանը: Գերասույթային (տեքստի) մակարդակում գնահատության այս «անորոշությունը» կարող է պարզաբանվել գնահատության հիմունքի հստակեցմամբ: Այստեղից էլ կարևորվում է այն հանգամանքը, որ ասույթում արձարժված գնահատության բովանդակությունը կարող է ձեռք բերել ավելի կոնկրետ ուղղվածություն, եթե տեքստի տարածքում հաշվի առնենք ասույթին նախորդող կամ հաջորդող համատեքստը: Այլ կերպ ասած, գնահատության հիմունքը կարող է արտահայտված լինել գնահատողական կառույց պարունակող ասույթից դուրս՝ նրան նախորդող կամ հաջորդող «տեքստային տարածքներում»:

But to think of your mother begging you with her last breathe to kneel down and pray for her. And you refused. There is something sinister in you. (JU 11)

Ասույթի բովանդակային պլանը թույլ է տալիս ենթադրել, որ *sinister* գնահատությունը, ասույթում առկա գնահատության բնույթից բացի, ունի նաև այլ հիմունքներ՝ ասույթին հաջորդող կամ նախորդող հատվածներում:

Գնահատության առաջնային օբյեկտը ասույթ կարող է ներմուծվել նաև *there is something, adj. about smb/smith* կառույցով: Դիտարկենք մի քանի օրինակ.

There is something curious about you. You are curiously strong. (LWL 308)

He had grown huge and terrible. His eyes flared like headlights of an automobile. There was something fearsome about him. He hold the pine table-

leg in his right hand, and even it had grown. Danny challenged the world.
(STF 143)

*“There was something dangerous about the deserted house.” She recalled
old newspaper stories of murders in places like this.* (SWB 177)

Առաջին ասույթում *something* դերանունը փոխարինում է *strong* ածականի արտահայտած հատկանիշին: Հմմտ. *That you are strong is curious.*

Երկրորդում *something*-ը հանդես է գալիս որպես մի ամբողջ շարք ածականներին փոխարինող (*huge, terrible, flared*). *That Danny had frown huge and terrible that his eyes flares... was fearsome.* Երրորդում՝ դերանունը հարաբերվում է *dangerous* գնահատության հիմունքի հետ: Ակնհայտ է, ինչպես երևում է բերված օրինակներից, որ ածականի օգնությամբ գնահատվում է ոչ թե հենց օբյեկտը, այլ նրա որևէ հատկանիշը, անկախ այն բանից, թե անորոշ դերանունը մատնանշում է մեկ, թե մի քանի հատկանիշ, կամ էլ այն ընդհանրապես զուրկ է որևէ առարկայական վերաբերումից:

Ասության դիտավորությանը համապատասխան՝ օբյեկտը կարող է գնահատվել իրեն բնութագրող համալիր հատկանիշներով.

*“It gives me real pleasure to use things that are attractive in themselves
- pleasant things”.* (LWL 168)

Նման դեպքերում գնահատության օբյեկտը և գնահատության հիմունքները նույնանում են: Գնահատությունը ներառում է օբյեկտի բոլոր հատկանիշները: *in itself, in themselves* տիպի նախդրային շարույթների գործածությունը նպաստում է գնահատության ուժգնացմանը. «իրերը հրապուրիչ են իրենց բնութագրող բոլոր հատկանիշներով»:

Այս բնույթի գնահատողական կառույց պարունակող ասույթներում հեշտությամբ ներմուծվում է հարաբերության սուբյեկտը՝ արտահայտված կարծիքի սուբյեկտիվությունը շեշտադրելու համար:

*“The great Wall of China, the political situation in Italy, the habits of
Trematodes - all these are most interesting in themselves. But they aren’t
interesting to me”.* (HAH 60)

Interesting ածականի կրկնակի գործածությունը նույն ասույթում տարբեր նախդրային շարույթներով առաջ է բերում իմաստային տարբեր գործառնություններ: Ասույթի առաջին մասում *interesting in themselves* գնահատությունը ձգտում է առարկայի օբյեկտիվ նկարագրության՝ նրան հատուկ բոլոր հատկանիշներով: Երկրորդ մասում գնահատությունը կրում է հարաբերական բնույթ, այսինքն՝ հատկանիշը կարևորում է միայն գնահատող անձը (*interesting to me*):

Հատկանշական են նաև այն դեպքերը, երբ ասության սուբյեկտը գնահատության է ենթարկում մի շարք առարկաներ՝ հենվելով դրանցից մեկի որևէ հատկանիշի վրա: Ասույթում նման գնահատությունն ընթանում է *of its kind* նախդրային շարույթի ուղեկցությամբ: Շնորհիվ այս նախդրային շարույթի՝ գնահատողական կառույցը ստանում է երկակի ուղղվածություն.

- ա) բացահայտվում է *kind* գոյականի իմաստը,
 բ) բացահայտվում է ածականի իմաստը, այսինքն՝ տրվում են գնահատության հիմունքներ:

With her lively perception and her refined imagination she was capable of enjoying anything that was characteristic; anything that was good of its kind - the Wentworth household seemed to her very perfect of its kind - wonderfully peaceful and unspotted; pervaded by a sort of dove-colored freshness that had all the quietude and benevolence of what she deemed to be Quakerism, and yet seemed to be founded upon a degree of material abundance for which... one might have looked in vain at the frugal little court of Silberstadt - Schreckenstein. (JE 51)

Ինչպես տեսնում ենք, այս ծավալուն ասույթում մի կողմից մասնավորեցվում է *kind* գոյականի իմաստը, մյուս կողմից՝ *perfect* ածականի գնահատման հիմունքները. ի դեպ՝ բացահայտումն ընթանում է վերացականից կոնկրետ՝ *perfect of this kind, peaceful, unspotted, dove-coloured freshness, quietude, benevolence*:

Գնահատության հիմունքը համեմատություն է սոցիալ-ազգային ավանդական ըմբռնումների համատեքստում (Վենսվորտների տունը որոշակի առավելություններ ուներ եվրոպական այն փոքրիկ և համեստ տան համեմատությամբ, որտեղ ժամանակին ապրել է հերոսուհին):

Գնահատության հարաբերակցումն առարկայի այս կամ այն դասին կարող է իրականանալ *as smth/smb goes* կառույցի միջոցով: Օրինակ.

The Elsner sisters were not bad neighbors, as neighbors go. They made a little too much music that was the only fault I could find with them. (BM 105)

Նման տիպի կառույցներն ընդհանրապես ասույթ են ներմուծում նորմատիվ (հանրորեն ընդունված) գնահատություններ: Սակայն տվյալ դեպքում այդ նորմատիվության սահմանները փոքր ինչ նեղացել են, քանի որ դրանք համընկնում են ասության սուբյեկտի հայացքներին, բայց հայտնի չէ գնահատության մյուս մասնակցի տեսակետը: Գնահատության երկիմաստությանը նպաստում է նաև այն հանգամանքը, որ գնահատության հիմունքը հստակ արտահայտված չէ: Համատեքստը ավելի շատ հետադարձ գնահատության հիմունքի դեր է կատարում. բացատրվում է ոչ այնքան այն, թե ինչով էին հարևանները լավը, այլ այն, թե ինչն էր նրանց մեջ վատը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ *good in itself, good of its kind, good as neighbours go* շարույթները ի զորու չեն ասույթ ներմուծելու լիարժեք օբյեկտիվ գնահատություններ: Դրանք կարող են գործածվել միայն այն պարագայում, երբ որևէ կոնկրետ խոսքային իրադրությունում գնահատության հիմունքը համընկնի նորմատիվ սոցիալական հայեցակարգին:

Գնահատողական կառույցներում հաճախ են գործածվում ածականներ, որոնք զուրկ են իմաստային հստակությունից: Դրանք իրենց բնույթով մոտ են հարաբերական ածականներին: Նման ածականների առկայությունն էլ ավելի է կարևորում գնահատության հիմունքի դերն ասույթում: Այդ իսկ պատճառով

նման բնույթի ածականական գնահատողական կառույցներ պարունակող ասույթները հաճախ են ուղեկցվում հարցերով ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքում (գեղարվեստական տեքստերում): Ասության նպատակը գնահատության բովանդակությունը պարզաբանելու համար խոսքային իրադրության մասնակիցներից մեկի կողմից կարող են տրվել հետևյալ տիպի հարցեր.

1. *What is adj. about smth?*

The lights, for instance... what is there so strange about them, so wrong? Is it their irregularity, their instability, their shining strong one minute and weak the next, but never beyond the power of one or two candles? (BU 294)

“What was difficult about that riddle?” asked the Prince. “It was difficult to say without moving my jaws”, said the Sphinx. (JD 21)

2. *In what way? In what sense? In what style?*

“My dear sister”, said Felix, “the inhabitants are charming”. “In what style?” (JE 32)

But on close examination he (Joseph) proves to be somewhat peculiar. Peculiar? In what way? (BDM 18)

“What do you think? Is it serious?” echoed Ivor. “Most certainly”... “But in what sense serious?” Mr Scogan asked: “I mean as an occupation. One can go on with it without ever getting bored”. (HCY 85)

3. *Why?*

“Miss Waynflete very kindly got him some odd window cleaning work. Lord Whitfield objected at first, then suddenly he gave in – actually it was sad that he did so” “Why?” “Because the boy was killed that way...” (CME 38)

Բերված օրինակները ցույց են տալիս, որ հարցերի օգնությամբ պարզաբանվում են գնահատողական կառույցների ածականների արտահայտած իմաստների որակական և պատճառակցային հարաբերությունները գնահատության սուբյեկտի հետ՝ նպաստելով գնահատության հիմունքի բովանդակության բացահայտմանը:

Այսպես, *why* հարցը հարաբերակցում է գնահատության հիմունքին և միտված է վեր հանելու գնահատության պատճառայնության հանգամանքները: Եթե, ընդհանուր առմամբ, գնահատությունն իրականանում է օբյեկտի հատկանիշների շնորհիվ, ապա գնահատության պատճառայնության հիմունքները օբյեկտի տարրեր չեն հանդիսանում, այլ պարզաբանում են իրավիճակն ամբողջությամբ:

Գնահատության պատճառայնության հիմունքը կարող է ներմուծվել նաև *reason(s)* գոյականով: Օրինակ.

Yes, the words I heard, and heard quite distinctly... were heard a first time, then a second and often even a third, as pure sounds free of all meaning, and this is probably one of the reasons why conversation was unspeakably painful to me. (BM 50)

Ածականական գնահատողական կառույցներ պարունակող ասույթներում նման հարցերի ի հայտ գալը պայմանավորված է հաղորդակցական իրադրության երկու գործոնով.

1) հաղորդակցական իրադրության մասնակիցներից մեկին (գնահատության սուբյեկտին) հայտնի են գնահատության հիմունքները, իսկ մյուսին՝ ոչ: Վերջինս էլ ձգտում է պարզաբանման: Օրինակ.

*Mrs Acton: "I wish you could stay, if would be so pleasant for Robert".
Eugenia wondered what she meant by its being pleasant for Robert. (JE 144)
"But you don't see - that's horribly dangerous. Horribly". "You mean -
Luke grasped her point at last". "You mean that the killer will have a crack
at me". "Yes".* (CME 127)

2) հաղորդակցական իրադրության մասնակիցները գնահատության մեջ տարբեր իմաստներ են ներդնում: Օրինակ.

*"I'm afraid the news is not very good". "You mean, you can't
operate?", "I mean it's" not arthritis...; "It's cancer", said Tallis. "Yes."*
(MFD 286)

Ինչ վերաբերում է հարցերին, ասենք, որ հաղորդակցական իրադրության երկու գործոնները ներկայացնող ասույթներում, ինչպես տեսնում ենք, մի կողմից գործածված է *to mean* բայը, որի իմաստային պլանը վկայությունն է այն բանի, որ գնահատությունը մտավոր գործունեության տեսակ է (ասության սուբյեկտն ընտրում է օբյեկտի հատկանիշներից որևէ մեկը կամ ամբողջը), մյուս կողմից՝ խոսքային իրադրության մյուս մասնակցին հարաբերակցվող *to wonder, to grasp* բայերը և *to be at last* տիպի շարույթը, որոնց հաղորդակցական գործառույթը գնահատության հիմունքի կռահումն է (գրուցակիցն անում է դատողություններ՝ հենվելով սեփական պատկերացումների վրա): Նշված լեզվական միավորների գործածությունը վկայում է այն մասին, որ գնահատությունը բարդ և բազմագործոն լեզվամտածողական ու լեզվահոգեբանական գործընթաց է:

Այս գործընթացի կարևորագույն փուլերից մեկը, ինչպես արդեն նշել ենք, օբյեկտի հատկանիշների՝ որպես գնահատության հիմունքների ընտրությունն է: Դիտարկենք հետևյալ օրինակը.

"But it was..." Eleanor began. She stopped. What was it? As they (the children) stood there, they had looked so dignified, yet they had made this hideous noise. The contrast between their faces and their voices was astonishing; it was impossible to find one word for the whole. "Beautiful?" She said with a note of interrogation, turning to Maggie. "Extraordinary", said Maggie. But Eleanor was not sure that they were thinking of the same thing.
(WY 346)

Այս ծավալուն ասույթում, որը կարող է դիտարկվել նաև որպես տեքստի մի հատված, պարբերություն ցայտուն կերպով ի հայտ են գալիս ածականական գնահատողական կառույցների կազմավորման բոլոր դժվարությունները: Իրավիճակի գնահատության տարրերի վերլուծությունից ասության սուբյեկտն անցնում է ընդհանրացման և համեմատության: Գնահատության օբյեկտը (*the children*) բնութագրող հատկանիշները բացասական են (*dignified, hideous* ածա-

կաններն ասույթում հանդես են գալիս որպես դիպվածային հականիշներ): Այստեղից էլ առաջ է գալիս (+) կամ (-) հարանշաններից զուրկ *astounding* գնահատությունը: Ասության սուբյեկտի հետագա «ջանքերն» ուղղված են այս կամ այն (դրական կամ բացասական) հարանշանի ընտրությանը: Արդյունքում, ասույթում հայտնվում է *beautiful* (+) ածականը, սակայն գնահատության սուբյեկտը վստահ չէ դրանում: Ամենայն հավանականությամբ, խոսքային իրադրության երկրորդ մասնակիցը (զրուցակիցը) նույնպես որոշակի դժվարություններ է տեսնում ճշգրիտ գնահատության հարցում և *extraordinary* գնահատությունն, այդպես էլ, չի գտնում իր դրական կամ բացասական իմույթը: Եվ, վերջապես, *beautiful*, *extraordinary* գնահատությունների հիմունքների չհամընկնելն ուրվագծվում է հետևյալ ակնարկում՝

Eleanor was not sure that they were thinking of the same thing.

Այս օրինակը նույնպես պարզ ցույց է տալիս, որ գնահատության հիմունք կարող է դառնալ ոչ միայն առարկային պատկանող կամ վերագրվող հատկանիշը, այլ մեկ ուրիշ գնահատություն: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ գնահատության հիմունքը գնահատողական կառույցի կարևորագույն բաղկացուցիչ մասն է, առանց որի ասույթի իմաստը թերի է, անհասկանալի:

Գնահատության հիմունքի դրսևորման տիպական ձևերից է համեմատությունը, որը հիմնականում կարող է դրսևորվել երկու եղանակով.

1) համեմատությունը պարզեցնում է գնահատությունը, հանգեցնում ստանդարտ իրավիճակի: Օրինակ.

“The things she wants explained are... as simple as two and two make four”.

(WY 268)

Exertion and action were as natural to him as respiration. (JA 35)

Her (Morgan’s) face became hard and strange to her like a mask.

(MFD 387)

Mrs. Davidson’s voice fell on her ear with a hard monotony, irritating to the nerves like the pitiless clamor of the pneumatic drill. (MR 28)

Վերը շարադրված ասույթներում, ցանկացած գնահատողական կառույցի կարող են տրվել հետևյալ հարցերը. *In what way (sense) was it simple, natural, strange, irritating? In the same way as... What do you mean by its being simple?:* Նման հարցերը մատնանշում են, որ համեմատությունը գնահատության հիմունքին հաղորդում է որակական ծավալման բնույթ: Այս համեմատությունների պատկերավորությունը գործաբանական տեսանկյունից, կարծես, մղվում է երկրորդ պլան, և առաջնային է դառնում նմուշի, նորմայի հետ հարաբերվելու գործառույթը:

3) գնահատությունը բացահայտվում է պատկերավոր համեմատության միջոցով, սակայն այն կրում է սուբյեկտիվ բնույթ: Օրինակ.

“Thanks awfully,” she (Gudran) called back to him from the water, as the boat slid away. “It’s lovely – like sitting in a leaf”. (LWL 183)

Emily: “Being happy is rather melancholy – like the most beautiful landscape, like those trees and grass and the clouds and the sunshine today”.

(HAH 156)

Առաջին ասույթում *lovely* գնահատությունը դրսևորվում է *like sitting in a leaf* համեմատության միջոցով: Այդ համեմատության հիմքում ընկած է երկու առարկաների իրական նմանությունը: Այդ իսկ պատճառով գնահատությունն ավելի հեշտ է ընկալվում և մեկնաբանվում, քան, ասենք, գնահատության հիմունք ծառայող այսպիսի պատկերավոր համեմատության դեպքում. Օրինակ.

It's lovely, because the boat is light and moves fast.

Երկրորդ ասույթում պատկերը փոքր ինչ այլ է: Այստեղ ամեն ինչ սուբյեկտիվ է՝ թե գնահատությունը, թե գնահատության հիմունքը: Համեմատության կառույցի մեջ մտնող *melancholy* և *beautiful* ածականները գտնվում են համեմատության միևնույն հարթության վրա, այսինքն՝ երկրորդ ածականը չի բացահայտում առաջինի իմաստը: Բացի այդ՝ օբյեկտի գնահատության հատկանիշը (*happy* ածականը) և գնահատության ստորոգյալը (*melancholy*) ունեն հակառակ հարանշաններ, որոնք գնահատությունը դարձնում են անսպասելի: Գեղարվեստական տեքստերում այս բնույթի գնահատողական կառույցները հանդես են գալիս յուրակերպ ոճական հնարքների դերում:

Այս առումով հատկանշական են այն դեպքերը, երբ գնահատության օբյեկտը ներկայացնող արտահայտման լեզվամիջոցները պատկանում են գործառական մի ոճի, իսկ բուն գնահատության և համեմատության տեսքով հիմունքի արտահայտման լեզվամիջոցները՝ մեկ այլ:

“Some day I knew I should meet the only girl I could possibly love, and then I would pour out upon her the stored-up devotion of a lifetime, lay an unblemished heart at her feet, hold her in my arms and say ‘At last’. How jolly for her. Like having a circus all to oneself.” (WGB 50)

Ասույթում գնահատության օբյեկտի դերում հանդես է գալիս մի ամբողջ իրավիճակ, որը նկարագրվում է բարձրահունչ ոճով, այնպիսի լեզվական միջոցների կիրառմամբ, ինչպիսիք են *to pour out (devotion) upon smb, to lay an unblemished heart at one's feet* արտահայտությունները: Միաժամանակ այս ռոմանտիկական պատկերի գնահատության համար գործածվում է խոսակցական ոճին պատկանող *jolly* ածականը: Խոսակցական ոճին է պատկանում նաև *like having a circus all herself* համեմատությունը:

Երկու տարբեր ոճական պլանների հակադրությունը գնահատողական կառույցներ պարունակող ասույթներում կարող է երգիծական իրավիճակ առաջացնել (ինչպես վերոշարադրյալ օրինակում):

Հաշվի առնելով անգլերենի յուրացման առանձնահատկությունները մասնագիտական ֆակուլտետների ուսուցման բարձր փուլում, դժվար չէ նկատել, որ գնահատողական կառույցների նշյալ լեզվական հատկանիշները որոշակի դժվարություն կարող են ներկայացնել մասնավորապես բանավոր խոսքի կարողությունների զարգացման համար: Այստեղից կարելի է եզրակացնել, որ դրանք կարող են հիմք ծառայել համապատասխան լեզվախոսքային վարժությունների մշակման համար: Սույն հոդվածի շրջանակներում կսահմանափակվենք ընդամենը մի քանի օրինակների ներկայացմամբ:

Բերենք մի քանի օրինակ՝

- Բնութագրել *in* նախդրի իմաստային գործառույթները հետևյալ նախադասություններում.
- Հետևյալ նախադասություններում ընդգծել գնահատության օբյեկտի արտահայտչական միջոցները.
- Հետևյալ նախադասություններում ընդգծել գնահատության հիմունքը.
- Հարցերի օգնությամբ պարզաբանել գնահատողական կառույցների ածականների արտահայտած իմաստները.
- Հետևյալ ասույթում ընդգծել ածականի գնահատողական կառույցի բոլոր հատկանիշները:

Ինչպես նկատեցինք, ածականի գնահատողական կառույցի վերը նշված ոչ բոլոր հատկանիշները ընդգրկվեցին մեր կողմից առաջարկված վարժությունների մեջ, այն պարզ պատճառով, որ այս հոդվածի նպատակն է ոչ թե մշակել խնդրո առարկա լեզվական կառույցների ուսուցման վարժությունների համակարգը, այլ մեթոդապես հիմնավորել այդ համակարգի ստեղծման հնարավորությունն ու անհրաժեշտությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Cinque, G. (2010) *The Syntax of Adjectives: A Comparative Study*. // Cambridge, MA: MIT Press.
2. Fabregas, A. ; Leferman, B.; Marin, R. (2012) *Evaluative Adjectives are Davidsonian States*. // Tromso, Norway: University of Tromso.
3. Findlay, J.N. (1963) *Language, Mind and Value*. // Philosophical Essays. London: Allen & Unwin.
4. Hartman, R.S (1967) *The Structure of Value Foundations of Scientific Axiologic*. USA: Southern Illinois University Press.
5. Kertz, L. (2006) *Evaluative Adjectives: An Adjunct Control Analysis*. // Proceedings of the 25th West Coast Conference on Formal Linguistics. / Ed. by D. Baumer. Somerville, MA: Cascadilla Proceedings Project.
6. Tutin, A. (2010) *Evaluative Adjectives in Academic Writing in the Humanities and Social Sciences*. // Constructing Interpersonality. Cambridge: Cambridge Scholars Publishing.
7. Ивин, А.А. (1970) *Основание логики оценок*. М. Изд.-во МГУ.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Becket, S. (1965) *Molloy*. N.Y.: Grove Press. (BM)
2. Becket, S. (1965) *The Unnamable*. N.Y.: Grove Press. (BU)
3. Bellow, S. (1965) *Dangling Man*. N.Y.: Signet Books. (BDM)
4. Christie, A. (1966) *Hickory Dickory Death*. N.Y.: Pocket Books. INC. (CHDD)
5. Christie, A. (1968) *Murder in Easy*. London: Fontana Books. (CME)

6. Huxley, A. (1962) *Antic Hay*. London: Penguin Modern Classics. (HAH)
7. Huxley, A. (1962) *Crome Yellow*. London: Penguin Modern Classics. (HCY)
8. James, H. (1964) *The Europeans*. London: Penguin Modern Classics. (JE)
9. Joyce, J. (1982) *Dubliners*. M.: Progress Publishers (JD)
10. Joyce, J. (1971) *Ulysses*. London: Penguin Modern Classics. (JU)
11. Lawrence, D.H. (1973) *Women in Love*. London: Penguin Books. (LWL)
12. Maugham, S. (1977) *Rain and other Stories*. M.: Progress Publishers. (MR)
13. Murdock, I. (1973) *A Fairly Honourable Defeat*. London: Penguin Books. (MFD)
14. Steinbeck, J. (1970) *The Wayward Bus*. N.Y.: Bantam Books. (SWB)
15. Steinbeck, J. (1963) *Tortilla Flat*. N.Y.: Bantam Books. (STF)
16. Wodehouse, P. (1968) *The Girl on the Boat*. London: Pan Books Ltd. (WGB)
17. Wodehouse, P. (1962) *The Man Upstairs and Other Stories*. London: Penguin Books. (WMU)
18. Woolf, V. (1969) *Night and Day*. London: Penguin Modern Classics. (WND)
19. Woolf, V. (1968) *The Years*. London: Penguin Modern Classics. (WY)

Проблема преподавания структур с оценочным прилагательным

В данной статье рассматриваются языковые особенности оценочных прилагательных, которые часто употребляются не только в устной речи, а также для анализа и интерпретации художественного текста.

Отбор языкового материала или языковой структуры имеет важное значение для усовершенствования методов преподавания иностранных языков. Некоторые структуры оценочных прилагательных могут быть использованы для разработки языковых и речевых упражнений, а также впоследствии соответствующих обучающих систем.

On Teaching Structures with Evaluative Adjectives

The article deals with linguistic peculiarities of evaluative adjectives which are frequently used in oral speech. They are also applied for analysis and interpretation of literary texts. The choice of linguistic material or structure is of great importance for improving the methods of teaching. Some structures of evaluative adjectives can be used to elaborate appropriate linguistic and speech exercises, subsequently creating a relevant instruction system.